ԻՆՉՈՊ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐ ՋԿԱՆ

«Կոմերսանտ» թերթի 21րդ համարը լուր է տուել Մոսկուայում Ադրբեջանի ներկայացուցչութիւնում Մայիսի 22ին տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մասին, որին մասնակցել են Ադրբեջանի համայնավարների Կենտկոմի քարտուղար Ա.Դաշտամիրովը եւ հանրապետութեան իրաւապահ մարմինների ղեկավարները: Մամլոյ ասուլիսում վերոյիշեալ անձինք ամփոփել են այսպէս կոչուած «հայ գրոհայինների բացայայտման» գործողութիւնների արդիւնքները:

Այդ գործողութիւնների ընթացքում ձերբակալուել են 350 մարդ, որոնցից 144ի նկատմամբ քրէական գործեր են յարուցուել: 32 հազար մարդկանց զրանցումը յայտարարուել են անօրինական եւ, ինչպէս սպասւում է, մօտ ժամանակներս նրանք դուրս կը հանուեն ԼՂԻՄից: Ասուլիսում նշուել է նաեւ, որ գրոհայինների բացայայտման ողջ ծանրութիւնը ընկել է Ադրբեջանի ՕՄՕՆի վրայ: Միայն վերջին մի քանի շաբաթուայ ընթացքում սպանուել են երեք ՕՄՕՆականներ:

Այս լուրից յետոյ «Կոմերսանտ»ը տպագրել է նաեւ Ադրբեջանի ՆԳՆի ՕՄՕՆի ուսումնական բազաների, զրահամեքենաների եւ ջոկատների թուաքանակի ցուցակները:

Խմբագրութիւնը նշել է, որ այդ ցուցակները իրենց տրամադրուել են Հայաստանի ՆԳՆի քաջատեղեակ մարդկանց կողմից, որոնք դրանք ձեռք են բերել Ադրբեջանի ՆԳՆից ոչ պաշտօնական ճանապարհներով:

Ադրբեջանի ՕՄՕՆը 12500 անդամ ունեցող եռաստիճան մի կազմակերպութիւն է: Առաջին աստիճանը ԽՍՀՄ ՆԳՆ ՕՄՕՆն է, որի կազմում 1500 մարդ կայ: Ստեղծուել եւ ֆինանսաւորւում է ԽՍՀՄ ՆԳՆի կողմից 1990 թուականի Սեպտեմբերին: Երկրորդ աստիճանը Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՕՆն է՝ ստեղծուած 1990 թուականի Օգոստոսին Ադրբեջանի ԳԽի նախագահութեան որոշմամբ: Ենթարկւում է Ադրբեջանի ՆԳՆին: Տեղակայուած է հիմնականում Բաքւում, Սումգայիթում, Ղազախում, Նախիջեւանում, Կուբայում, Ասկարայում, Մինգեչաուրում: Ջոկատում 3000 մարդ կայ: Ֆինանսաւորւում է հանրապետական բիւջէի հաշուին: Երրորդ աստիճանը ՕՄՕՆ կամ ներքնապաշտպանութեան ոստիկանական ջոկատներ, որոնք կազմաւորուել են փաստօրէն հանրապետութեան բոլոր տարածքներում: Ենթարկւում են տեղական միլիցիային: Տեղական ջոկատների ընդհանուր թիւը 8000 մարդ է: Ֆինանսաւորւում է տեղական բիւջէների կողմից:

Ուսումնական պատրաստուածութիւն ստանում են երկու հիմնական բազաներում՝ Բաքուի Ազիզբէկովի շրջանի միլիցիայի դպրոցում ուսուցման տեւողութիւնը՝ 30 օր եւ Բաքուի Նիզամու շրջանում գտնուող ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի զնդում՝ ուսման տեւողութիւնը 45 օր: Ուսումնական խմբերը բաղկացած են 30 մարդուց: Աւարտելիս տրւում է վկայական: Սովորողների սահմանային տարիքը 45ն է:

ՕՄՕՆի ստորաբաժանումներում կան խմբեր, որոնք կոչւում են հարուածային: Դրանք կազմում են Աֆղանստանում, Երեւպիայում, Վիետնամում ծառայած մարդկանցից: 20-25 հոգուց բաղկացած խմբերը կազմելիս հաշուի են առնում անձնական ծանօթութիւնները:

ՕՄՕՆը զինելու համար տրամադրուած է՝

ԱԿՄ զնդացիրներ 3500 հատ

ԱԿ զնդացիրներ 2000 հատ

ՌՊԿ հրթիռարձակ 120 հատ

ՊԿ հրթիռարձակ 90 հատ

Նշանառու հրացաններ 60 հատ

Մակարով ատրճանակներ 4000 հատ

Ստեչկինա ատրճանակներ 350 հատ

Բոլոր տեսակների մէկ միաւորի համար տրուել է 2,5 մարտական:

Ունեն զրահատեխնիկայ՝ զրահամեքենայ. 15 հատ, դեսանտային զրահամեքենայ 6 հատ, զրահամեքենայ 11 հատ, տանկեր 18 հատ

Զինտեխնիկան ԽՍՀՄ ԱԳԱի հրամանով տեղափոխուել է Երեւանի, Թբիլիսիի եւ Ուկրաինայի զինմասերից:

Ունեն երեք ուղղաթիռ, առանց տարբերակիչ նշանների, ազգային խորհրդանիշով՝ կիսալուսինը եւ աստղը: Ուղղաթիռներից մէկը պատկանում է ազրոարդին, իսկ միւսը՝ Ադրբեջանի քաղաքացիական օդագնացութեանը:

ՕՄՕՆի ստորաբաժանումները տեղակայուած են հետեւեալ կերպ. Ստեփանակերտի օդակայանում 150 մարդ, Խոջալու՝ 200, Շուշի՝ 350, Մալիբէյլի՝ 200, Աղդամ՝ 350, Լաչինում՝ 400, Ֆիզուլի՝ 250, Բիշատուլ՝ 100, Լեսնոյում՝ 70: Զինտեխնիկան կենտրոնացուած է Աղդամում, Լաչինում, Իլիչեւսկում: Ուղղաթիռների բազան Լաչինից 40 կիլոմետր հեռաւորութեան վրայ է:

30 Մայիս 1991 թ.